



## 21. ԱՆԶԻԳՅԱՐ ՄԵՐ

Կըլնի շիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք ունենում են մի տղա, մի աղջիկ։ Համա մերը խորթ ա ըլնում, հերը հալալ։ Խորթ մերը էս էրկու էրեխեքանցը ըսկի օր չեր տալի։

Մի հետ էլ մարդի յախեն ա կպնում։ — Ա՛յ մարդ, — ասում ա, — թե ուզում ես, որ ես քու կնիկն ըլնեմ ու քեզ աշքիս լսի պես սիրեմ։ Էս քու էրեխեքանցդ ոնց ըլնի յա պտի մորթես, յա թե չէ տանես մի դհով կորցնես, որ աշքս շտենա դրանց։ Թե չէ իմաց կա'ց, ես գլուխ վեր կունեմ, կէթամ։

Խեղճ հերը չեր իմանում ի՞նչ անի, որ ջուրն ընկնի, որ կնկա ձեռիցը պրծնի։ Ճար չկար. եղի վերջը էլի պտի նրա ասածն աներ։

Մի օր, տղին կանշում ա, ասում ա։ — Արի՛ գլուխդ վեր անեմ, — ու բիրդան արծլով տալի՛ շինքը թոցնում։ Մերը տղի միսը էփում ա ու ինքը մեն-մենակ ուտում՝ անուշ անում, մնացածն էլ քվոր հմար պահում։

Քիրը իրիկումը տոմ ա գալի, մորից հաց ուզում։ — Ա՛զի, սո՛ված եմ. ըսկի ի՞նչ կա ուտելու

Մերը թոնթորալին ասում ա։ — Մա՛հեն դուռում ուտես դու. գնա՛ հրեն սալի միջին մի քանի թիքա միս կա՛ վե կալ, կե՛,

Խեղճ քիրը գնաց, ի՞նչ տենա՛ իրա աղպոր ձեռները։ Նստեց ընդե մի կուշտ լաց էլավ. համա լաց ըլնելոն ի՞նչ պտի աներ, բա-

Նը բանից անց էր կացել: Աղպոր ձեռները վե կալավ ու դը՝ ոնե  
դուս: Գժվածի նման քուշ-քուշ ընկած ման էր գալի:

Վերջը սրան մի մոլլա ռաստ էկավ. հարցրեց.— Խի՞ ես լաց  
ըլնում:

Քիրը նազլ արեց, ինչ որ զլխովը անց էր կացել:

— Բա՛ն չկա, ո՛րդի, — ասեց մոլլեն, — մի լաց ըլնի. Էդ ձեռ-  
ները տար դի մի պատի ճղակ՝ վրեն ջուր ածա, աղպերդ էլ եդ  
կսաղանա:

Քիրը ըսենց էլ անում ա. վեր ա ունում տանում մի պատի  
ճղակում ֆորում, վրեն ջուր ածում թե չէ՝ էն սհաթը աղպերը սա-  
ղանում ա, ծիտ ըլնում՝ թոնում: Էս ծիտն ա՝ թոնում ա էթում,  
դուքանե դուքան ման գալի, հետը ասում.

«Միտիկ եմ, ծիտմիտիկ եմ,

Հոր մորթած եմ,

Մոր կերած եմ,

Աղիդ<sup>1</sup> քվոր լացած եմ»:

Ո՛րը մի թոփ ասեղ ա տալի, ո՛րը մի թոփ քորոց, ո՛րը մի  
բաղդադի աղլովս, մախաս, ո՛վ ինչ ուզում ա: Ըսենց հավաքելոն  
թոնում ա էթում իրանց երդկի գլխին նստում, ասում ա: — Հե՛րիկ,  
մե՛րիկ. մի վեր մտիկ ա՞նեք:

Հենց որ հերն ու մերը դպա երդիկն են մտիկ անում թե չէ՝  
տղեն ամեն մեկի աշքը մի-մի թոփ ասեղ ա քցում, աշքները քո-  
ռացնում:

Եննա քվորն ա ձեն տալի.— Քո՛ւրիկ, քո՛ւրիկ. մի վեր մտիկ  
ա՞նես:

Քիրը զլովսը բանձրացնում ա թե չէ՝ մի բաղդադի աղլովս էլ  
նրա զլխին ա քցում:

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ անուշ. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

